ARMSWISSBANK

Մենք առաջարկում ենք
իրական լուծումներ



ՄԵՐ ՄԱՍԻՆ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը ՀՀ-ում գործունեություն է իրականացնում սկսած 2005թ.-ից և ունի ընդգծված թիրախավորում: Մասնավորապես Բանկը, զերծ մնալով մասսայական բանկային ծառայություններից, իրական և անհատական լուծումներ է առաջարկում Փոքր և Միջին Ձեռնարկություններին, ինչպես նաև Կորպորատիվ հաճախորդներին: Բանկի մասնագիտացված և երկար տարիների փորձ ունեցող թիմը հաճախորդներին առաջարկում է նորարարական, առաջադեմ և միջազգային շուկաներում ընդունված բանկային ծառայություններ: Բացի ավանդական բանկային ծառայություններից, ինչպիսիք են վարկերը, ավանդները, քարտային գործարքները, տեղական և միջազգային վճարումները, Բանկն առաջարկում է նաև այլ-ընտրանքային ֆինանսավորման ծառայություններ, առևտրի ֆինանսավորման գործիքներ (ֆակտորինգ, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման ֆինանսավորում, ներմուծման ֆինանսավորում, ակրեդիտիվներ, երաշխիքներ և այլն), ներդրումային ծառայություններ, էսքրոու և ոսկով հաշիվների բացում, ինչպես նաև ածանցյալ գործիքների հետ գործարքներ և այլ ծառայություններ:

Մեր հիմնական արժեքներն են պրոֆեսիոնալիզմը, գործընկերությունը, հուսալիությունը, թափանցիկությունը և ճկունությունը: Բանկի աշխատանքի իրական գնահատականն են բազմաթիվ գոհունակ հաճախորդները, որոնց թիվն օրեցօր ավելանում է:

ARMSWISSBANK
world elite
0000 0000 0000 0000
mastercard
VALID THRU 07/25
NAME SURNAME

Ի՞ՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ում բոլոր բանկային գործիքները ստեղծված են հաճախորդներին արագ և արդյունավետ լուծումներ առաջարկելու համար: Հետևելով միջազգային լավագույն փորձին և զարգացումներին՝ Բանկը պարբերաբար ներդնում է նոր պրոդուկտներ և կատարելագործում է առկա գործընթացները: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն ակտիվ համագործակցում է տեղական և միջազգային առաջատար կազմակերպությունների հետ՝ ապահովելով թվարկված ծառայությունների բարձրակարգ մատուցումը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐՆ ԵՆ

- Հաշիվների սպասարկում
- Ավանդներ
- Արտարժույթով և ոսկով գործառնություններ
- Արժեթղթերով գործառնություններ
- Արժեթղթերի թողարկումներ
- Հեջավորման գործիքներ
- Պահառություն և ռեեստրավարում
- Վարկեր
- Լիզինգ
- Տեղական և միջազգային ֆակտորինգ
- Բանկային երաշխիքներ

ՄԵԶ ՀԵՏ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԱԳ Է ԵՎ ՃԿՈՒՆ...

Վարկային հայտերը քննարկելիս, վարկը հաստատող մարմինը հաշվի է առնում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Հաճախորդի վարկունակությունը գնահատվում է հաշվի առնելով փորձը, եկամտաբերությունը, բանկային հաշիվների շրջանառությունը, գործարքների հաճախականությունը, վարկային պատմությունը և այլն: Հատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդի հետ համագործակցության զարգացման հեռանկարներին, հաճախորդի թափանցիկությանը և կառավարման որակին, ինչպես նաև Բանկի տեսլականին բիզնեսի ընդունելիությանը և համապատասխանությանը:

Բիզնեսի
Զարգացման Վարկեր

Առևտրի Ֆինանսավորման
Նպատակով Վարկեր

Հաշվի վարկավորում

Նախագծի ֆինանսավորում



Ժամանակակից
գյուղատնտեսական վարկեր

Բանկային երաշխիքներ

Լիզինգ

Ակրեդետիվ

ԼԻԶԻՆԳԸ ՇԱՀԱՎԵՏ Է ...

Եթե ցանկանում եք Ձեր բիզնեսը համալրել կամ արդիականացնել նոր սարքավորումներով, տեխնի-կայով, արտադրական հոսքագծերով և այլ հիմնական միջոցներով, ապա ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի լիզինգային գործիքը լավագույն լուծումներից է:
Այս գործիքի միջոցով ընկերությունները նպաստում են իրենց կողմից արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացմանը և աշխատանքի արտադրողականության աճին:

ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի տարբերություն սովորական վարձակալության՝ լիզինգով ձեռք բերվող գույքը դառնում է կազմակերպության սեփականությունը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը մատուցում է խորհրդատվական ծառայություն՝ նվազագույնի հասցնելով գույքի ձեռքբերման ռիսկը՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով նաև համապատասխան վճարային գործիքներ (օրինակ՝ ակրեդիտիվ):

Ֆինանսական վարձակալության ընթացքում սարքավորումը կազմակերպության հաշվեկշռում հաշվառվում է և ամորտիզացվում՝ մասնակցելով շահութահարկի հաշվարկման նվազեցումներին:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը հանդիսանում է ՀՀ Կառավարության «Տնտեսության արդիականացման միջոցառման» գործընկերբանկ և իր հաճախորդերին առաջարկում է ֆինանսավորում պետական սուբսիդավորմամբ:

Ծանոթացեք
մանրամասներին

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը Հայաստանում գործող ֆինանսական հաստատությունների շարքում առաջիններից է, որը ներդրել և զարգացրել է ֆակտորինգը՝ որպես առևտրի կարճաժամկետ ֆինանսավորման արդյունավետ գործիք: Բանկը մատուցում է ֆակտորինգային ծառայությունների լայն շրջանակ՝ յուրաքանչյուր Հաճախորդի կարիքներին և պահանջներին համապատասխան: Ֆակտորինգային սպասարկումը ներառում է հետևյալ ծառայությունները՝

- *հետաձգված վճարումներով վաճառքների ֆինանսավորում*
- *դեբիտորական պարտքի վարում և հաշվառում*
- *դեբիտորական պարտքի հավաքագրում*
- *գնորդի չվճարման ռիսկի ծածկում*

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը տարածաշրջանում առաջին ֆինանսական հաստատությունն է, որն անդամակցել է FCI (Factors Chain International) առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ասոցիացիային: Անդամակցությունը Բանկին հնարավորություն է տալիս շուրջ 90 երկրում տեղակայված ավելի քան 400 անդամ կազմակերպությունների միջոցով հաճախորդներին առաջարկել միջազգային ֆակտորինգային ծառայություններ:



Տեղական Ֆակտորինգ

Միջազգային Ֆակտորինգ

Ակրեդիտիվ

Երաշխիք

ՄԵՆՔ ՁԵԶ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ...

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի առաքելությունն է հմուտ և պրոֆեսիոնալ անձնակազմի շնորհիվ հաճախորդներին առաջարկել կայուն և ճկուն լուծումներ, տրամադրել նրանց մեր ժամանակը և ռեսուրսները՝ հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության ու կայուն ֆինանսավորման մեր սկզբունքներին:
Մենք պատրաստ ենք միասին զարգացնել Ձեր բիզնեսը ֆինանսական գործիքների գրագետ կիրառմամբ և մոդելա-վորմամբ՝ առաջարկելով ինչպես ավանդական, այնպես էլ այլընտրանքային լուծումներ:

Ձեր բիզնեսի ընդլայնման և առաջմղման ֆինանսական բոլոր լուծումները և խորհրդատվությունը կարող եք ստանալ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ում:

Վազգեն Սարգսյան 10,
0010 Երևան, Հայաստան

(+374 60) 757 000
(+374 11) 757 000

www.armswissbank.am
info@armswissbank.am



Արմսվիսբանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից